

# Ժողովուրդ

129  
(2979)

25 սեպտեմբերի չորեքշաբթի 2024  
տպագրության ԺԳ տարի

Է. Երեան, Արմլյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ԿՐԱՎԱՔՎԵՆ ԵՄ ԱՆՌԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




Մինչ արտախորհրդարանական ուժերն այս օրերին հասարակության եվրոպամետ հատվածի ստորագրություններն են դրում, որպեսզի այդ միջոցով իշխանություններից պահանջեն ԵՄ անդամակցության հարցով հանրաքվե անցկացնել, Նիկոլ Փաշինյանը իր թիմակիցներին հրահանգել է՝ ԵՄ-ին անդամակցելու հարցով հանրաքվե չի լինելու:

Այսպիսով, ինչպես հայտնի է, սեպտեմբերի 16-ից արտախորհրդարանական եվրոպամետ մի շարք ուժեր ստորագրահավաք են անցկացնում. 50 հազար ստորագրության դեպքում նրանք համապատասխան ստորագրությունները ներկայացնելու են ԱԺ պահանջելով Հայաստանում ԵՄ անդամակցության հարցով հանրաքվե անցկացնել: Նիկոլ Փաշինյանը, չնայած իր սատելիտ արտախորհրդարանական ուժերի նախաձեռնությանը, լրիվ այլ ծրագրեր ունի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԶԳ վարչության ձեռնապահով քննարկումներից մեկի ընթացքում նա իր թիմակիցներին ասել է՝ հանրաքվե չի լինելու, իրենց օրակարգում ԵՄ անդամակցության հարց չկա եւ չի կարող լինել: Այս տեղեկության առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը գրուցեց ԶԳԿ փոխնախագահ, վարչության անդամ Վահագն Ալեքսանյանի հետ, ով ասաց, որ վարչության նիստերը փակ են. «Երկրորդ՝ այն թեմաները, որոնք քննարկում ենք, մեր ռեզիզներում հրապարակում ենք, իսկ այդ թեման ընդհանրապես չի քննարկվել եւ ռեզիզներում էլ չկա»: ԶԳԿ վարչության անդամ, ՊՎԾ ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը եւս ասաց, որ վարչության նիստերի մասին տեղեկություն պաշտոնապես տրվում է, ինքը ոչինչ չունի ասելու: Իսկ երբ նրանից հետաքրքրվեցինք՝ առհասարակ, իրենց օրակարգում կա՞ ԵՄ-ին անդամակցելու հարց, նման քննարկում կուսակցությունում ունեցե՞լ են, եթե ունեցել են, ի՞նչ ֆորմատով, նա խուսափողական պատասխան տվեց. «Խնդրում եմ, այդ մասով հարցեր մի ուղղեք, ես վարչության անդամ եմ, բայց հարկ եղած դեպքում վարչության կողմից հայտարարություն տարածվում է: Ես որեւէ մեկնաբանություն կուսակցական գործունեության մասով չեմ ուզում եմ տալ»:

Ռոմանոս Պետրոսյանից հետաքրքրվեցինք նաեւ՝ ինքն անձնապես ի՞նչ դիրքորոշում ունի այս մասով, արդյոք իրատեսական համար՞ում է ԵՄ անդամակցությունը: Պետրոսյանը կրկին խուսափեց պատասխանելուց՝ ասելով՝ «Ես դիրքորոշում չունեմ դրա վերաբերյալ հայտնելու»: **Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:**

Երեանում կառուցվող 35 հարկանի 5 երկնաքերերը խաթարել են Փոսի դպրոցի՝ Երեանի Հակոբ Օշականի անվան N172 հիմնական դպրոցի դասարանները: Բանն այն է, որ արդեն երկու շաբաթ է N172 հիմնական դպրոցում դասերը օւլայն են ընթանում, քանի որ «Ռենշին» ՍՊԸ-ի կողմից իրականացվում է շինարարություն, որի արդյունքում դպրոցի բարձր հարկի դասարաններում երկրաշարժ է, երեխաները խուճապահար են եղել: Թե այս մասին ինչ է մտածում կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, հարցական է. նա նման դեպքերում անհաղորդ է: Սակայն փաստ է, որ շինարարությանը չխանգարելու համար երեխաների դասերն օւլայն են անցկացվում, ոչ թե, օրինակ, շինարարությունն է դադարեցվում պետության կողմից: Օրբելի-Բաղդամյան խաչմերուկում երկնաքերեր կառուցողը «Ռենշին» ընկերությունն է: Նախագծման աշխատանքները, ինչպես տեղեկանում ենք «Ռենշին» ընկերության պաշտոնական կայքից, կատարել են արտասահմանյան ընկերություններ. «Ինժեներիա» ARUP. ինժեներաշինարարական լուծումներում համաշխարհային առաջատարներից, ճարտարապետությունը՝ միջազգային Laguarda.low ընկերության կողմից»: Հիշեցնենք, որ ArmLur.am-ը նախկինում գրել էր, որ «Ռենշին» քաղաքաշինական ներդրումային ընկերությունը անմիջական կապ ունի ՀՀ փոխվարչապետ Սիեր Գրիգորյանի հետ: Ինքը՝ փոխվարչապետը, խուսափում է որեւէ արձագանք տալուց, հերքելուց կամ հաստատելուց... **Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:**



Քաղաքական իշխանությունը ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի գիտնական անդամի փնտրտուքի մեջ է եւ իր «սրտի» թեկնածուին փորձում է գտնել փաստաբանական համայնքից: Մասնավորապես, քաղաքական իշխանությունը այն փաստաբանների մեջ է փնտրում ԲԴԽ անդամի, որոնք հիմնականում դատարաններում իշխանության դեմ հայցերն են պաշտպանում: Ավելին՝ փաստաբաններից մեկի մասով ակտիվ քննարկումներ են ընթացել, բայց դեռ վերջնական որոշում չկա. իսկ ԲԴԽ գիտնական անդամի տեղը խորհրդում 2 ամիս է, ինչ դատարար է: Հիշեցնենք, որ Վիգեն Քոչարյանի լիազորությունների ժամկետն ավարտվել է բոլորովին վերջերս՝ հունիսի 25-ին՝ պաշտոնավարման հիվա տարին լրանալու հիմքով: Եվ անցնող 5 տարիներին, քանի որ Վիգեն Քոչարյանը ԲԴԽ-ում պաշտոնավարել է քաղաքական իշխանությանը չհակադրվելու, այլ ծառայություն մատուցելու սկզբունքներով, հիմա առավել մեծ հավակնություններ ունի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել է, որ ԲԴԽ նախկին անդամ Վիգեն Քոչարյանը Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածու է դարձել: ԲԴԽ-ն հուլիսի 10-ին դռնփակ նիստում որոշում է կայացրել՝ «Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա անձանց ցուցակը կազմելու, հաստատելու եւ ԱԺ-ին առաջարկություն ներկայացնելու մասին» եզրակացությունը: Եվ ահա, այդ որոշման համաձայն, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ցուցակում են հայտնվել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գուրգեն Մախաթյանը, Նոտար Ատոմ Հայրապետյանը եւ ԲԴԽ նախկին անդամ, ԵՊՀ դասախոս Վիգեն Քոչարյանը:



Շարունակելով գլխավոր քարտուղարների ունեցվածքների շարքը՝ հերթը տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Արթուր Երիցյանին է: Նա պաշտոնի նշանակվել է 2022 թվականին: Երիցյանը հայտարարագրել է երկու անշարժ գույք՝ մեկ անհատական բնակելի տուն եւ մեկ բնակարան բազմաբնակարան շենքում: Անհատական բնակելի տունը գտնվում է Լոռու մարզի Ալավերդի համայնքում, բնակելի տունը՝ Երեանում: Պաշտոնավարման տարիներին նա որեւէ անշարժ գույք ձեռք չի բերել: Գլխավոր քարտուղարը հայտարարագրել է մեկ տրանսպորտային միջոց՝ 2019 թվականին ձեռք բերված 2011 թվականի արտադրության MITSUBISHI-ի մակկիշի մեքենա: Նրա բնակային հաշիվների մնացորդը կազմել է 803 եվրո, 496 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտը կազմել է 13 մլն 466 հազար դրամ, որից 13 մլն 146 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից: Որպես եկամուտ Երիցյանը նաեւ ապահովագրական հատուցման վճար է ստացել՝ 320.000 դրամ «Սիլ Ինշուրանսից»: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 416 հազար դրամ: Հարկ է նշել, որ Արթուր Երիցյանի որդին՝ Գագիկ Երիցյանը, ՀՀ քաղաքացի չէ՝ համաձայն հոր ներկայացրած վերջին հայտարարագրի: **Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:**



ԶՐՈՒՅՑ

# ԱՊԱՎԻՆՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Գեղի եվրոպա...

Ահա այս կոչի ներքո հայաստանյան արտադրողները և առևտրային կազմակերպությունները համախմբել են այն ֆաբրիկայից հանրապետության տարածքում և արտաքին շուկաներում համարվող արտադրանքները:



Մեր հերթին ժողովրդի աջակցությամբ գիտենք, թե ինչպես պիտի առաջնորդենք այս շարժումը: Օրենքով սահմանված կարգով՝ հավաքում ենք 50 հազար ստորագրություն, որից հետո կտեսնենք, թե հարցն Ազգային ժողովում ինչ ընթացք կունենա եւ դրանից հետո կորոշենք, թե ինչպես ենք շարունակելու մեր գործողությունները: Բայց այն, որ իշխանությունը ոչ թե Նիկոլ Փաշինյանն է, այլ ժողովուրդը, այս հարցում երկու կարծիք լինել չի կարող:

Պարոն Բաբաջանյան, գիտենք լաւեւ, որ 50 հազար ստորագրությունը, Ազգային ժողովում մերժելու դեպքում, հնարավոր է հավաքել 300 հազար ստորագրություն՝ հարցը հանրապետության նկատմամբ: Հարավոր է, որ այդ քայլին գնաք:

Մենք որեւէ բան չենք բացառում, սակայն այս պահին որոշում չունենք: Ժողովրդի ոգեւորությունը տեսնելով, սակայն, կարծում ենք, որ որեւէ դժվարություն չի լինի 300 հազար ստորագրություն հավաքելու համար:

Հիշեցնենք, որ «Ժողովրդավարական ուժերի հարթակ»-ը հայտնել էր իր մտադրության մասին՝ ԵՄ-ին Հայաստանի անդամակցության հանրապետի հարցով ստորագրահավաք կազմակերպելու վերաբերյալ: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնել էր «Հայաստանի Եվրոպական» կուսակցության ղեկավար Տիգրան Խաչատրյանը:

Նշենք լաւեւ, որ ավելի վաղ այս հարթակը դիմել էր ԱԺ՝ հանրապետական կուսակցության անդամակցության հանրապետի հարցով ստորագրահավաք կազմակերպելու վերաբերյալ: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնել էր «Հայաստանի Եվրոպական» կուսակցության ղեկավար Տիգրան Խաչատրյանը:

Նշենք լաւեւ, որ ավելի վաղ այս հարթակը դիմել էր ԱԺ՝ հանրապետական կուսակցության անդամակցության հանրապետի հարցով ստորագրահավաք կազմակերպելու վերաբերյալ: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնել էր «Հայաստանի Եվրոպական» կուսակցության ղեկավար Տիգրան Խաչատրյանը:

Հրոյեց ԲՐԻՍՏԻՆ ՍՈՒՇԵՆՅԱՆԸ

## ԱՆԴՐԱԴՐՈՂ

### ՋՈՒՐԸ ԹԱՆԿԱՑԱՎ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է ՄԱՍ 220

2018 թվականի նոյեմբերի 27-ին, խորհրդարանական արտահերթ ընտրությունների քարոզարշավի ընթացքում Ելույթ ունենալով Ալավերդի քաղաքում, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Ի հեճուկս նախկինում կառավարության կնքած պայմանագրերի՝ խմելու ջուրը 33-ում չի թանկացել, թեւս այս դեկտեմբերին պետք է թանկանար, բայց մինչեւ 2024 թվականը չի թանկանալու»:

Սակայն Փաշինյանի վերոնշյալ Ելույթի ժամանակ իրականում խմելու ջուրն արդեն թանկացել էր, պարզապես համաձայնություն էր ձեռք բերվել թանկացումը կիրառել 2024 թվականից: Դրա դիմաց գործադիրը համաձայնել էր նվազեցնել եւ հետագայում «Վեոլիա ջրի» ներդրումային պարտավորությունները:

Այս խոստումից հետո Հայաստանում խմելու ջուրը երկու անգամ թանկացավ՝ 2022թ. հունվարի 1-ից մոտ 20 դրամով 2023թ. հունվարի 1-ից 9 դրամով

2024 թվականի հունվարի 1-ից խմելու ջուրը էժանացել է 2,47 դրամով եւ կազմել 206 դրամ: Ստացվում է՝ Նիկոլ Փաշինյանը, որը խոստանում էր մինչեւ 2024 թվականը ջուրը չթանկացնել, խաբեց, քանի

որ ջուրը թանկացրել է ջուրը 30 դրամով, էժանացրել՝ 2,5 դրամով: Շարունակականը կարող էք հետեւել ArmLur.am լրատվականում:

### ԲԱՅՐԱՄՈՎԸ՝ ԲԱՔՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 79-րդ նստաշրջանի շրջանակում «Ապագայի գազաթանաժողովում» ունեցած ելույթում Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովը հայտարարել է, թե Բաքուն Երեւանին առաջարկել է խաղաղության հաստատման օրակարգ՝ հիմնված Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման եւ հարգանքի վրա:

«Մենք կոչ ենք արել վերացնել մնացած խոչընդոտները եւ ընդգծել ենք այդ նպատակին հասնելու համար քաղաքական կամքի եւ պատասխանատվության կարեւորությունը», - ասել է Բայրամովը:

Նրա խոսքով՝ Ադրբեջանը բախվել է միջազգային իրավունքի խախտումների հետ, ուստի լիովին աջակցում է գազաթանաժողովի՝ միջազգային իրավունքի նորմերի խիստ պահպանման կոչին:

### ՀԱՐՑ՝ ՄԳ ՆԱԽԱԳԱՐԻՆ

«Ես՝ որպես անձ, ուշադիր հետեւում եմ այդ իրադարձություններին, բայց որեւէ կերպ չեմ միջամտում քրեական գործի քննությանը»: այս մասին երեկ՝ սեպտեմբերի 24-ին՝ ՄԳ նիստից առաջ, լրագրողների հետ զրույցում նշեց Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը՝ անդրադառնալով հարցին, թե ինչպես է գնահատում Սահմանադրական դատարանի անդամ Հրայր Թովմասյանի նկատմամբ հարուցված քրեական վարույթի ընթացքը, որի արդյունքում իր գործընկերը երկու դրվագով մեղավոր է ճանաչվել:

«Իսկ որպես դատարան, որպես դատարանի դատավոր ու նախագահ, երբ կգամեր ասելու ժամանակը, մենք անպայման կասենք», - նշեց նա:

Անդրադառնալով Կիրակոսի հատվածում տեղի ունեցած սահմանազատմանը եւ այն քննադատություններին, որ այդ գործընթացն ապօրինի է, քանի որ սահմանազատման հանձնաժողովների կազմակարգը չի հաստատվել, Դիլանյանն ասաց. «Ես այս պահին որեւէ գնահատական չեմ տա: Ավելի լավ է՝ սպասենք, եթե այդ հարցը կգա ՄԳ, այդ ժամանակ մենք գնահատական կտանք»:



### ԻՆՉ ԵՆ ԲՆԵԱՐԿԵԼ ԼԻՏՎԱՅԻ ԱԳՆ-Ի ՀԵՏ

Սեպտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Լիտվայի ԱԳ նախարար Գաբրիելիուս Լանդաբերգիսի հետ:

Զրուցակիցները քննարկել են երկկողմ եւ բազմակողմ ձեռնարկներում փոխգործակցության հարցեր:

Անդրադարձ է կատարվել ՀՀ-ԵՄ գործընկերության օրակարգի ընդլայնման ուղղված համատեղ աշխատանքներին, առկա հեռանկարներին: «ՀՀ-ն շարունակում է ժողովրդավարական բարեփոխումները, մենք ակտիվորեն խորացնում ենք ԵՄ հետ համագործակցությունը բոլոր ուղղություններով, եւ մեծապես գնահատում ենք այս ճանապարհին Լիտվայի անկեղծ աջակցությունը», - ընդգծել է ՀՀ ԱԳ նախարարը:

### ԱՐՑԱԽԸ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԽԱՉՆ Է

Մեր արժանապատվությունը եւ համայն հայության խաչն այսօր Արցախն է, որը գերեզմանավայր է: Այս մասին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում «Արցախի կանչը» հուշակոթողի հիմնարկների արարողության ժամանակ ասաց Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ տեր Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը:

«Այսօր ինքներդ մտածեք, թե ինչ է պետք Արցախը գերությունից ազատելու համար, որպեսզի նորից ազատագրենք մեր արժանապատվությունը: Իմ թիկունքին կանգնեցված է երկու դրոշմ՝ ՀՀ-ի եւ Արցախի: Մենք ամեն ինչ պետք է անենք, որ Արցախի Հանրապետությունը ոչ միայն գոյություն ունենա, այլեւ կարողանա իրականացնել իր առաքելությունը. ուստի ամեն ինչ պետք է անենք, որ Արցախի Հանրապետությունը Հայաստանում լինի լիարժեք՝ իր օրենսդիր ու գործադիր բոլոր կանոններով: Արցախը պետք է տեսանելի լինի եւ Սփյուռքի, եւ միջազգային հանրության համար», - ասաց Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը:

### ԼԻՔԱՆԱՆԸ ԶՊԵՏՔ Է ՎԵՐԱԾՎԻ ԳԱԶԱՅԻ

Լիբանանյան «Հըզբալլահ» շարժումը կանգնած է մինչեւ ատամները զինված թշնամու դեմ, որին հասանելի են առաջադեմ գիտատեսակները եւ որին աջակցում են ԱՄՆ-ն, Եվրոպան. այս մասին Նյու Յորքում ասել է Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը:

Նա ընդգծել է, որ չպետք է թույլ տալ, որ Լիբանանը Իսրայելի ձեռքով վերածվի հերթական Գազայի:

««Հըզբալլահ»-ը չի կարող միայնակ կանգնել Իսրայելի դեմ, որին պաշտպանում, աջակցում են արեւմտյան, եվրոպական երկրները. ուստի մենք պետք է կանխենք Իսրայելի հանցավոր գործողությունները», - ասել է Իրանի նախագահը:

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՅՈՒՐԱԿԱՆՆԵՐ»-Ի ՍՈՐԱՅԵԼ ԶԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՐԿՈՒՄ Է

ՇՈՒՐՔ 600 ԶՈՂ ԵՎ 1900 ՎԻՐԱՎՈՐ

Լիբանանում իրավիճակը սրանում է: Իսրայելը հայտարարել է «Հրգբալլահի»-ի ավելի քան 300 ռազմական նշանակալի մասին: Երկու օր է ռմբակոծվում է Բեքայի հովիտը՝ Բաալբեք, Միդն, այսօր երեկոյան արդեն հարվածներ են հասցվել Չահլե գյուղաքաղաքին: Բեքայի հովիտում գտնվող հայկական Այնճար գյուղում այս դահիկն հանգիստ վիճակ է, սակայն Բեքայի հովիտի սկսել են սահմանել բնակիչներին, ինչը կարող է վստահավոր նախադեպ լինել եւ Իսրայելին առաջ ընթացաբար հնարավորություն սալ:



ամենաշատ զոհերն է տվել մեկ օրվա կտրվածքով: Բեքայի հովտի բնակչությունը տարիանվում է դեպի Բեյրութ եւ Սիրիա: Սիրիայի Զանաբալթությունը, նախագահ Բաշար ալ Ասադի հրահանգով, բացել է սահմանները լիբանանցի փախստականների համար: Զայկական Այնճար ավանում շուրջօրյա վերհսկողություն է սահմանվել, ազգային կառույցներն ու գրասենյակները 24-ժամյա կտրվածքով հերթապահությամբ աշխատում են՝ բնակչության կարիքները բավարարելու համար: Գյուղի բնակչությանը հորդորել են միայն խիստ անհրաժեշտության դեպքում դուրս գալ գյուղի տարածքից: Լիբանանի առողջապահական համակարգը, որը առանց այդ էլ վերջին տարիներին ճգնաժամի մեջ էր, չի հասցնում ըն-

դունել վիրավորներին: Զենց այս խնդրի լուծման համար էլ Իրաքը եւ Իրանը արդեն մի քանի ինքնաթիռ օգնություն են ուղարկել, այդ թվում՝ դեղորայք եւ բժշկական սարքավորումներ: Բացի այդ վիրավորների մի խումբ տեղափոխվել են Լիբանանից՝ բուժման նպատակով: Լիբանանում ընթացող ռազմական գործողություններին զուգահեռ Իրաքի շիա ժողովրդական աշխարհագորայիները հայտարարել են Լիբանանին մարդասիրական օգնություն ցուցաբերելու լիակատար պատրաստակամության եւ մոբիլիզացիայի մասին: Զայտարարության մեջ նշվում է, որ աշխարհագորայիները պատրաստ են օգնակցելու Լիբանանին պարենային, բժշկական, հումանիտար եւ այլ ոլորտներում: **ՀՈՒԻ ԲԱՂՂԱՍՏՈՅԱՆ**

ՄԻՐԻԱՆ ԲԱՅԵԼ Է ՄԱՀՄԱՆՆԵՐԸ



Սիրիան բացել է սահմանները Լիբանանից հեռացողների համար, որոնք Իսրայելի ինտենսիվ ավիահարվածների հետեւանքով հեռանում են իրենց բնակավայրերից: Այս մասին հայտնում է լիբանանայան «Հրգբալլահ» շարժման թելեգրամայան ալիքը: Դատելով համացանցում տարածված տեսանյութերից՝ Լիբանանի ճանապարհներին մեծ խցանումներ են գոյացել:

ՉԵՂԱՐԿԵԼ ԵՆ ԶՎԵՐԹՆԵՐԸ ԳԵՊԻ ԻՍՐԱՅԵԼ

Wizz Air, British Airways, Azerbaijan Airlines ավիաընկերությունները չեղարկել են չվերթները դեպի Իսրայել: Պատճառն Իսրայելի եւ Լիբանանում «Հրգբալլահ»-ի միջեւ փոխադարձ ավիահարվածներն են, գրում է Times of Israel-ը: Զիջեցնենք, որ Իսրայելի ինտենսիվ օդային հարվածները հարավային Լիբանանում «Հրգբալլահ» շարժման թիրախների ուղղությամբ, դարձել են 558 մարդու զոհվելու եւ 1835-ի վիրավորվելու պատճառ: Ընդհանուր առմամբ, հասցվել է 1,600 հարված: Զողորդվում է, որ «Հրգբալլահ»-ը իր հերթին ավելի քան 400 հրթիռ է արձակել: Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ Իսրայելի հյուսիսում դարձնելով փակվել են:

ԼԻԱԿԱՍԱՐ ՄՈՒԲԻԼԻԶԱՅԻԱ ԼԻԲԱՆԱՆԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԿԱՄԱՐ

Իրաքի շիա ժողովրդական աշխարհագորայիները հայտարարել են Լիբանանին մարդասիրական օգնություն ցուցաբերելու լիակատար պատրաստակամության եւ մոբիլիզացիայի մասին: Այս մասին ասվում է հայտարարության մեջ, որը «ԴԻՎ Նովոստի»-ն սեպտեմբերի 23-ին ստացել է աշխարհագորայիների ղեկավար Ֆալիխ ալ-Ֆայադից: Զայտարարության մեջ նշվում է, որ աշխարհագորայիները պատրաստ են օգնակցել Լիբանանին պարենային, բժշկական, հումանիտար եւ այլ ոլորտներում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐԻ ԿԱՆԳԻՊՈՒՄ

Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 79-րդ նստաշրջանի շրջանակներում, հանդիպել են Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Զնդկաստանի վարչապետ Նարեկոյա Մոդի: Այս մասին տեղեկանում ենք Զնդկաստանի վարչապետ X-ի էջում արված գրառումից: «Զրաշալի էր, որ այսօր ավելի վաղ ՄԱԿ-ում կայանալիք Ապագայի գագաթնաժողովի կուլիսներում հանդիպել են Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ», - ասվում է Զնդկաստանի վարչապետի գրառման մեջ:

ԿԲԱՐՉՐԱՉԱՅՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խորհրդակցական սենյակում իր դիտարկումները կբարձրաձայնեմ: Այս մասին երեկ՝ սեպտեմբերի 24-ին, ՄԴ Նիստից առաջ, լրագրողների հետ զրույցում նշեց ՄԴ անդամ Զրայր Թովմասյանը, անդրադառնալով նրան, որ այսօր ՄԴ-ն քննելու է Զայաստան-Ադրբեջան սահմանագաման հանձնաժողովների համատեղ աշխատանքի մասին կանոնակարգի սահմանադրականության հարցը:

ՅԱՐԳԻՆ՝ ՆԿԱՏԵՂ Է ԽՆԴԻՐՆԵՐ, ՆԱ ԿԱՏԱԽԱՆԵՑ

Զարցին՝ նկատել է խնդիրներ, նա պատասխանեց: «Այդ խնդիրները, եթե նկատել են, առաջին հերթին խորհրդակցական սենյակում պետք է բարձրացնեն, նոր լրատվամիջոցների համար սենյակում»: Ծառող հարցին՝ խնդրահարույց որեւէ բան չի՞ տեսնում այդ կանոնակարգում, նա արձագանքեց. «Իհարկե, տեսնում եմ, այնտեղ կբարձրաձայնեմ»: Զիջեցնենք, որ ԶԶ Սահմանադրական դատարանը երեկ գրավոր ընթացակարգով քննել է Զայաստան-Ադրբեջան սահմանագաման հանձնաժողովների համատեղ աշխատանքի մասին կանոնակարգի սահմանադրականության հարցը:

ԱՐՑԱՆԻ ՄԻՊ-Ը ՄԵԿՆԵԼ Է ԱՄՆ

Արցախի Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը սեպտեմբերի 15-20-ը աշխատանքային այցով գտնվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այցը կազմակերպվել է Save Armenia եւ Save Persecuted Christians կազմակերպությունների հրավերով: Այցի շրջանակներում Գեղամ Ստեփանյանը հանդես է եկել ելույթով ԱՄՆ Կոնգրեսի Թոմ Լանթոս մարդու իրավունքների հանձնաժողովում, որտեղ իր ելույթում ընդգծել է Արցախից բռնի տեղահանված անձանց միջազգային աջակցության տրամադրման, Ադրբեջանում անօրինա-

բար պահվող հայ ռազմագերիների եւ պատանդների ազատ արձակման հարցում միջազգային ճնշման, Արցախում հոգեւոր մշակութային ժառանգության պահպանության հարցում միջազգային կազմակերպությունների գործունեության եւ Արցախի ժողովրդի անվտանգ եւ արժանապատիվ վերադարձի իրավունքի իրացման հարցի քննարկման համար միջազգային հարթակի ձեւավորման անհրաժեշտությունը: Մարդու իրավունքների պաշտպանը հանդիպում է ունեցել ԱՄՆ պետական դեպարտամենտի միջազգային կրոնական ազատությունների բաժնի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում առանձնապես ընդգծել է Արցախում հոգեւոր-մշակութային ժառանգության ոչնչացումը կանխելու համար Ադրբեջանի նկատմամբ պատժիչ գործողությունների ձեռնարկման կարեւորությունը: Գեղամ Ստեփանյանն Արցախի հայաթափման առաջին տարեկիցին նվիրված ելույթներով հանդես է եկել նաեւ Save Armenia-ի կազմակերպած «Իրավիճակի պարզաբանում. Արցախի էթնիկ-կրոնական գտում» խորագրով քննարկմանը եւ ԶՅԴ Զայ դատի Ամերիկայի հանձնախմբի կազմակերպած «Զաշվետվողականություն 2024» միջոցառմանը: ԱՄՆ մեկնած պատվիրակության կազմում էին Տեր Զովհաննես քահանա Զովհանիսյանը, ադրբեջանական հանցագործությունների գոհերի հարազատները, CFTJ կազմակերպության ներկայացուցիչներ:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄՈՏ ԿԱՏԱՐՎԱԾ ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

ՀՀ Բննչական կոմիտեի Երևան ֆազի Բննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի Բննչական բաժնում ավարտվել է մի խումբ անձանց կողմից Ամերիկյան համալսարանի մոտ զենքի գործարմամբ խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քննչական վարույթի՝ չորս մեղադրյալի մասով նախաձեռնությունը:

Դեպքի վերաբերյալ Բննչական կոմիտեն ավելի վաղ տեղեկացրել էր, որ 2024 թվականի մայիսի 3-ին՝ ժամը 13:26-ին, ահազանգեր էին ստացվել այն մասին, որ Ամերիկյան համալսարանի մոտ վիճաբանություն էր տեղի ունեցել, որի ընթացքում կրակոց էր հնչել:

Ահազանգի կապակցությամբ Բննչական-օպերատիվ խումբը մեկնել էր դեպքի վայր, որտեղ պարզել էր, որ Նշված վայրում ծեծկռուռ է տեղի ունեցել: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել էին արյան հետքեր եւ կրակված փամփուշտի գնդակ:

Հաղորդման առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում քննիչների եւ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների կողմից ձեռնարկված համատեղ եւ համակարգված միջոցառումների արդյունքում պարզվել են քննության համար էական Նշանակություն ունեցող հանգամանքներ:

Նախաքննության ընթացքում իրականացված ապացուցողական գործողությունների արդյունքում պարզվել է միջադեպին մասնակից անձանցից չորսի ինքնությունը, անհատականացվել՝ նրանցից յուրաքանչյուրի գործողությունները:

Մասնավորապես, պարզվել է, որ դեպքի նախորդ օրը՝ մայիսի 2-ին, Ամերիկյան համալսարանի ուսանողներ Հ.Ֆ.-ն եւ Ռ.Ս.-ն վիճաբանել են միմյանց հետ, որից հետո՝ մայիսի 3-ին՝ ժամը 13:20-ի սահմաններում, վերջինս մի խումբ անձանց եւ հոր, իսկ Հ.Ֆ.-ն եղբոր հետ, պարզաբանումներ կատարելու նպատակով, ժամանել են Ամերիկյան համալսարանի մոտ գտնվող արագ սննդի կետի դիմաց,



որտեղ կրկին վիճաբանություն է սկսվել կողմերի միջև:

Այդ ընթացքում, հասարակության նկատմամբ անհարգալից եւ իրավական ու բարոյական Նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, տվյալ տարածքում գտնվող քաղաքացիների, համալսարանի ուսանողների եւ աշխատակիցների, հարակից տարածքում գործող սրճարանների աշխատակիցների անդորրը խախտելով, վիճաբանող կողմերը հնչեցրել են հայիոյանքներ, հարվածներ հասցրել միմյանց, ինչի ընթացքում Ռ.Ս.-ի հայրն իր մոտ գտնվող WALTHER P38 մոդելի հրազենի կոթով բազմաթիվ հարվածներ է հասցրել մեկ անձի գլխի հատվածին, ինչից հետո նաեւ արձակել է մեկ կրակոց:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա մեկ անձի՝ Ռ.Ս.-ի հորը մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով, երեք անձի՝ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Մեկ անձի նկատմամբ ընտրվել են համակցված այլընտրանքային խափանման միջոցներ՝ վարչական հսկողություն, գրավ եւ բացակայելու արգելք, երկու անձի նկատմամբ՝ գրավ եւ բացակայելու արգելք, մեկ անձի նկատմամբ՝ բացակայելու արգելք:

Վերջիններիս մասով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի Նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին:

Միջադեպին մասնակից մյուս անձանց, այդ թվում՝ վնասվածք ստացած անձի մասով նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ նրանց ինքնությունը պարզելու, հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմինն ներկայացնելու ուղղությամբ:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՀՀ քննչական կոմիտե

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԵՏԱՊՆԳՈՒՄԸ ԳԱԳԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրաչյա Ղեւնոյանի գործով պաշտպանության կողմը ՀՀ գլխավոր դատախազին միջնորդություն է ներկայացրել, որով խնդրել է Ղեւնոյանի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնել եւ վարույթը կարճել՝ հիմք ընդունելով երեք ատյանների կողմից հաստատված այն փաստը, որ բացակայում է նրա կողմից իշխանության յուրացման նախապատրաստության հիմնավոր կասկածը:

Այս մասին հայտնում են Ղեւնոյանի պաշտպաններ Ալեքսանդր Կոչուբատը, Արամ Վարդեանյանը, Էրիկ Ալեքսանյանը:

ՔՐԳՈՐԾՈՎ ԳԻՄՈՒՄ ԶԱՆԱՐՈՎԱՅԻՆ ԵՎ ՇՈՅՊՈՒԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ իշխանության յուրացման գործով կալանավորված ԱԺ Նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբոր՝ Սերոբ Գասպարյանի պաշտպանական կողմը դիմում է ուղարկելու ՌԴ ԱԳՆ մամուլի գործող խոսնակ Մարիա Զախարովային, ինչպես նաեւ ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգույին, որպեսզի պարզեն՝ արդյոք Ռուսաստանում գործում է «Արբատ» անվանումով ռազմաբազա, թե ոչ:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ են ստացվել՝ մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ, իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու մասին:

Քրեական հետապնդում էր հարուցվել 7 անձի նկատմամբ: Նրանցից 3-ը կալանավորվել են, իսկ 4-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Կալանավորվածների մեջ է ԱԺ Նախկին պատգամավոր Ռուստամ Գասպարյանի եղբայրը՝ Սերոբ Գասպարյանը:

ԲՈՆԱԳԱՆՉՄԱՆ ՔՐԳՈՐԾ

Հաշվեքննիչ պալատի նախկին ղեկավար Լեւոն Յոյանը եւ նրա դուստրը՝ Սերի Յոյանը, հրավիրվել են Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն:

Նրանց ուղարկված ծանուցման մեջ Նշված է. «ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Ձեզ պատկանող գույքի առկայությամբ իրականացվել է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր:

Դուք իրավունք ունեք սույն ծանուցագիրը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում ներկայանալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն՝ ծանոթանալու գործի Նյութերին, ներկայացնելու դիմադրություն, ինչպես նաեւ հայտարարագիր»:

ՆԱԽԿԻՆ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՐԱԿՈՑԸ

ՏԱՆ ԳԱՂՏՆԻ ՀԵՏՆԱՄՈՒՏՔԻ ԴՈՒՌԸ ԲԱՑ Է ԵՂԵԼ

2019 թվականի սեպտեմբերի 24-ին, ՀՀ նախկին ոստիկանապետ 63-ամյա Հայկ Հարությունյանին զսան ինքնասպանության եղած: Վերջինիս հայցաբերեցին գլխի շրջանում հրազենային վնասվածքով:



ու կրակոցի օրը գաղտնի հետնամուտքի դռները բաց են եղել:

Ի վերջո, ինչ փուլում է Հայաստանի Հանրապետության նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանի խորհրդավոր ինքնասպանության դեպքով հարուցված քրեական գործը ՀՀ քննչական կոմիտեում: «Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին, որ Հայկ Հարությունյանին ինքնասպանության հասցնելու դեպքով քրեական վարույթը ընթացքի մեջ է:

Ասել է թե՛ 5 տարի անց գործով քննությունը շարունակվում է, սակայն հիմնական հարցի պատասխանը չկա՝ ի վերջո ինչու կամ ո՞վ հասցրեց Հայկ Հարությունյանին ինքնասպանության:

ՔՍԱՐ ՄԱՆՈՒԿՍԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 23-ից 24-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 102 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳԱՍ ԵՆ ԱՆՈՒՄ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ

2021 թվականի սեպտեմբերից՝ արդեն 3 տարի, Իջեան համայնքի Գանձաքար գյուղի միջնակարգ դպրոցի 465 աշակերտները դաս են անում գյուղի մշակույթի տանը...

ԻՆՉ ԾԵՍԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ ԳԻԼԻՋԱՆԻ ԱՆՏԱՌՈՒՄ

Դիլիջան քաղաքի բնակիչ տղամարդն իր հեռախոսում առկա մի տեսանյութ ցույց տվեց «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողին...

ՈՍՎԻՆ ՍՈՐՈՍՅԱՆ Տավուշ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2024 թվականի հուլիս ամսվա անշարժ գույքի վերաբերյալ իրականացված ընդհանուր գործարքներն ըստ ՀՀ մարզերի եւ երեսան քաղաքի.

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ ՀՀ Սյունիքի մարզում անշարժ գույքի մասով իրականացված գործարքները կազմել են 4.8 տոկոս...

Եթե խոսենք ավելի հստակ, թվերով, ապա մայրաքաղաք Երեւանում 2023 թվականի հուլիս ամսին անշարժ գույքի 5080 գործարք է իրականացվել...

Արագածոտնի մարզում 2023 թվականի հուլիս ամսին կատարվել է 1187 գործարք, իսկ արդեն հաջորդ թվականի հուլիս ամսին՝ 1455 գործարք...

Գեղարքունիքի մարզում 2023 թվականի հուլիս ամսին կատարվել է 1080 գործարք, իսկ 2024 թվականի հուլիս ամսին՝ 1367 գործարք...

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ԳԻՆԸ ԿՐԿԻՆ ՓՈՓՈԽՎԵԼ Է

Հեղուկ գազի շուկայում ամեն բան կրկին խառնվել է:

Բանն այն է, որ մի օր հեղուկ գազը շեշտակիորեն թանկանում է՝ հասնելով տարորինակ բարձր գնի...

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է անդրադարձել այս թեմային, քանի որ հեղուկ գազի գինը վերջին 3-4 ամսում զարմացնում է վարորդներին:

Ըստ տնտեսագետների՝ հեղուկ գազի գնի բարձրացումը կապված է ՌԴ-ից հեղուկ գազ ներկրելու հետ...

Հիշեցնենք, որ Նախորդ ամիս «Ժողովուրդ» օրաթերթը եղել է մի քանի գազալցակայաններում տեղում պարզելու՝ ինչի հետ է կապված հեղուկ գազի անդադար տատանվող գինը...



նի Նախորդ ամսվա գործարքների հետ համեմատած:

Կոտայքի մարզում կատարված գործարքների թիվը բավականին բարձր է: 2023 թվականի հուլիս ամսին Կոտայքի մարզում կատարվել է 3367 գործարք...

Սյունիքի մարզում 2023 թվականի հուլիս ամսին կատարվել է 663 գործարք, իսկ արդեն 2024 թվականի հուլիս ամսին՝ 1104 գործարք...

Վայոց ձորում գործարքների թիվն ամենաքիչն է կազմում: 2023 թվականի հուլիս

ամսին Վայոց ձորում կատարվել է 341 գործարք, իսկ հաջորդ տարվա հուլիս ամսին գործարքների թիվն աճել է եւ դարձել 464: 2024 թվականի հուլիս ամսին գործարքների թիվը կրկին աճել է եւ դարձել 527:

Տավուշի մարզում 2023 թվականի հուլիսին կատարվել է 817 գործարք, իսկ հաջորդ տարվա հուլիս ամսին կատարվել է 1486 գործարք...

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի հուլիս ամսին կատարվել է 17 629 գործարք, իսկ արդեն 2024 թվականի հուլիս ամսին՝ 21 147 գործարք՝ աճելով 3518-ով:

Մանրամասն՝ ArmLur.am կայքում ԱՆՏԱ ՍՈՐՈՍՅԱՆ

կայն, որ հետագայում կրկին սպասվում են թանկացումներ, ակնհայտ է:

Այսօր էլ «Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսել է, որ հեղուկ գազը հիմա էլ էժանացել է՝ 240 դրամից դառնալով 210 դրամ:

Ա. ՍՈՐՈՍՅԱՆ

«ՏԵԼԵԳՐԱՄ» ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԸՆԿՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ

Telegram-ի կանոնները խախտողների IP հասցեները եւ հեռախոսահամարները կարող են փոխանցվել համապատասխան մարմիններին՝ ի պատասխան հիմնավոր իրավական հարցումների:

Այս մասին հայտարարել է Telegram-ի հիմնադիր Պավել Դուրովը:

«Մենք թարմացրել ենք ծառայությունների մատուցման մեր պայմանները եւ գաղտնիության քաղաքականությունը, որպեսզի ապահովենք դրանց համապատասխանությունն ամբողջ աշխարհի պահանջներին:

Որոնումը Նախատեսված է ընկերներ գտնելու եւ նորություններ ստանալու, այլ ոչ թե ապօրինի ապրանքներ գովազդելու համար:

Նա պարզաբանել է, որ Telegram-ի որոնման մեջ ապօրինի ապրանքների վաճառքի համար չարաշահման դեպքեր են հայտնաբերվել: Telegram-ի թիմը վերջին շաբաթների ընթացքում այնտեղից ջնջել է խնդրահարույց բովանդակությունը, հավելել է նա չնշելով, թե ինչի մասին է խոսքը:

Անցած շաբաթ ֆրանսիական ՋԼՍ-ները գրել էին, որ Telegram-ը Դուրովի ձեռքալուծությունից հետո սկսել է պատասխանել ֆրանսիացի ընկիչների հարցումներին:

Ավելի ուշ տեղեկություն հայտնվեց, որ մեծեղծերի վարչակազմն այժմ պատասխանում է այլ երկրների հարցումներին:

Telegram-ի կողմից արտաքին աշխարհի հետ հարաբերություններ ստեղծվեցին Դուրովի ձեռքալուծությունից հետո, երբ աշխարհը փորձում էր Telegram-ի վրա ուժ կիրառել:

ԷՄՄԱ ՄԻՔՍԵԼՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲԻԶՆԵՍ ԿԱՊԵՐ՝ «ՆԻԳԵՌԱՆԳՆԵՐ-ԲԵԼԳԻԱ»-ՈՒՄ

Նիդերլանդներում եւ Բելգիայում գործունեություն իրականացնող հայազգի խոշոր գործարարներն այսուհետ համահայկական ամենամեծ բիզնես ցանցի մասն են: Բացվել է «Մանթաշյան» գործարարների ակումբի 18-րդ մասնաճյուղը աշխարհի երկու հայկական մեծ համայնք ունեցող երկրներում՝ Նիդերլանդներում եւ Բելգիայում:

«Մանթաշյան» գործարարների ակումբի համահիմնադիր, նախագահ Վահրամ Միրաքյանը եւ Հայաստանից ժամանած մի խումբ գործարարներ ներկա են եղել մասնաճյուղի պաշտոնական բացմանը:

«Մանթաշյան» Նիդերլանդներ-Բելգիա» մասնաճյուղի համահիմնադիրներ են Օսիկ Կադյանն ու Գեորգ Կադյանը:

«Մանթաշյան» ակումբի նոր մասնաճյուղի բացմանը ներկա են գտնվել նաև 8 երկրներից ժամանած մանթաշյանականներ, որոնց հետ քննարկվեցին մասնաճյուղի հեռանկարներն ու գործունեության ճանապարհային քարտեզը:

«Այս պահին «Մանթաշյան» Նիդերլանդներ-Բելգիա» մասնաճյուղը կգործի միասին, բայց ժամանակի ընթացքում այն բաժանվելու է երկու մասնաճյուղի, այսինքն՝ մենք ակումբականներ ունենք եւ Նիդերլանդներից եւ Բելգիայից: Եվրոպայի մեր երկրորդ եւ երրորդ մասնաճյուղերն են այս պահի դրությամբ, սրանից առաջ մենք Գերմանիայում էինք, բայց մոտակա չորս ամիսների ընթացքում եւս չորս մասնաճյուղ ենք ունենալու: Եվրոպայում, այնպես որ, այս ուղղությունը դեռ շարունակելու է զարգանալ», - իր խոսքում նշել է ակումբի համահիմնադիր, նախագահ Վահրամ Միրաքյանը:

Միրաքյանը նաև փաստել է, որ Նիդերլանդներում մենք մեծ հայկական համայնք ունենք եւ մասնաճյուղը գալիս է օգնելու, որպեսզի այդ հայ համայնքը ավելի արդյունավետ բիզնես գործունեություն ծավալի հենց համայնքի ներսում:

ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՊԵԿ-ՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Անկախության 33-րդ տարեդարձի առթիվ Պետական եկամուտների կոմիտեում տեղի է ունեցել ՊԵԿ աշխատակիցների պարգևատրման արարարողություն:

Շնորհավորելով Անկախության 33-րդ տարեդարձը՝ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադալյանն ընդգծել է, որ Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման ու հզորացման գրավականը հարկ վճարողների կողմից հարկերի բարեխիղճ վճարումն է:

Միջոցառման ավարտին ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադալյանը կոմիտեի մի շարք աշխատակիցների շնորհիվ է մեղալներ, կրթնաշնչաներ, հարկային եւ մաքսային ծառայությունների արտա-հերթ հատուկ կոչումներ ու դասային աստիճաններ: ՊԵԿ մի խումբ աշխատակիցների հայտարարվել է «Շնորհակալություն»՝ աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՆԵՐՉՈՍՔ-ԱՐՑԱՂՈՍՔԵՐ, ԾԱԽՍԵՐ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը հունիսի 7 տոկոսից (սվլյալ ժամանակահատվածը՝ նախորդ սարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) հուլիսին նվազեց 6.2 տոկոսի: Առևտրի աճի շեմը թուլացավ հունիսի 16.2 տոկոսի դիմաց հուլիսին կազմելով 14 տոկոս: Ծառայությունների աճի շեմը (բացի առևտրից) եւս նվազեց՝ հուլիսին կազմելով 4.9 տոկոս՝ հունիսի 7.8 տոկոսի դիմաց: Նույն ժամանակահատվածում ԵՊՄԱՐՈՒՅՈՒՆԸ ԵԱՐՈՒՆԱԿԵԳ ԱՃԷՆՑՎՈՐԱՊԵՆ 18 ՏՈՒՆՈՒՄԸ:



Արդյունաբերության աճը փոքր-ինչ բարելավվեց՝ հունիսի 1.3 տոկոսից հուլիսին կազմելով 2.2 տոկոս, հիմնականում պայմանավորված էլեկտրաէներգիայի եւ էլեկտրոնիկայի ավելի մեծ աճով (13 տոկոս): Մշակող արդյունաբերության աճի ցածր տեմպը պահպանվեց՝ 2.5 տոկոս, ընդ որում հիմնական արտադրական ենթախմբերի մեծ մասի կրճատմամբ՝ սննդամթերքը, խմիչքները եւ ոսկերչական ապրանքները նվազեցին համապատասխանաբար 5 տոկոսով, 4.4 տոկոսով եւ 27 տոկոսով: Դա փոխհատուցվեց սիգարետի (21 տոկոս), տեքստիլի (23 տոկոս) եւ սեւ ու գունավոր մետաղների (74 տոկոս) արտադրության աճով: Հանքարդյունաբերության անկումը շարունակվեց, սակայն ավելի դանդաղ տեմպով՝ հունիսի 10.7 տոկոսի համեմատ հուլիսին կազմելով 5.4 տոկոս: Տնտեսական ակտիվության աճի հունվար-հուլիս ամիսների աճողական ցուցանիշը կազմել է 9.6 տոկոս:

Ոչ առևտրային զուտ դրամական փոխանցումները հուլիսին նվազեցին 38.1 տոկոսով՝ պայմանավորված 23.1 տոկոսով պակաս ներհոսքերով: Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքերը հուլիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատությամբ, նվազեցին 42 տոկոսով, միաժամանակ փոքր-ինչ աճելով տվյալ ամսին՝ նախորդ ամսվա համեմատ:

Միաժամանակ, ԱՄՆ-ից ներհոսքերն աճեցին 8.8 տոկոսով: Աճեցին նաև դրամական տրանսֆերների արտահոսքերը (մասնավորապես՝ ՄԹ եւ ԱՄՆ)՝ նպաստելով զուտ ներհոսքերի նվազմանը: Արտահոսքերը դեպի Ռուսաստան նվազեցին 13 տոկոսով:

Օգոստոսին գնաճը, երրորդ ամիսն անընդմեջ, բարձրացավ՝ հաջորդելով 2023 թ. հոկտեմբերից սկսած գնաճի նվազման ժամանակաշրջանին: Օգոստոսին գնաճը կազմեց 1.3 տոկոս՝ հունվար-օգոստոս ամիսների միջին գնաճը հասցնելով -0.1 տոկոսի: Տրանսպորտի գներն օգոստոսին բարձրացան 9.1 տոկոսով՝ պայմանավորված ակցիաների 9 տոկոսանոց աճով եւ ներմուծվող նավթի ավելի բարձր գներով:

Սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքների մասով օգոստոսին արձանագրվեց 1 տոկոսի գնաճ: Սեպտեմբերի սկզբին ՀՀ կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) վերաֆինանսավորման (քաղաքականության) տոկոսադրույք իջեցրեց եւս 25 տոկոսային կետով՝ մինչեւ 7.5 տոկոս. սա 2024 թ. սկզբից սկսած հինգերորդ անընդմեջ իջեցումն էր:

Ոսկու եւ ոսկերչական արտադրանքի վերաարտահանումը հուլիսին շարունակեց արտահանման աճի հիմնական շարժիչը լինել:

ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի եւ ռուսական ռուբլու նկատմամբ հարաբերականորեն կայուն էր հունիս-օգոստոս ժամանակահատվածում: 2023 թ. համեմատ ՀՀ դրամ - ԱՄՆ դոլար փոխարժեքը սոսկ 0.5 տոկոսով էր ավելի թույլ օգոստոսի վերջին, իսկ ՀՀ դրամ-ռուսական ռուբլի փոխարժեքը արժեզրկվեց 6.2 տոկոսով:

Հուլիսին գրանցվեց բյուջեի 69 միլիարդ ՀՀ դրամի պակասուրդ: Ասվածը հիմնականում պայմանավորված էր ծախսերի աճով: Անդհանուր ծախսերն ընդլայնվեցին 24.4 տոկոսով՝ հիմնականում պայմանավորված 19.6 տոկոսով ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը եւս ընդլայնվեցին 43.6 տոկոսով՝ պայմանավորված պաշտպանության եւ ճանապարհային ցանցի բարելավումներով:

Առևտրային բանկերի ավանդները եւ վարկերը հուլիսին ընդլայնվեցին 1.6 տոկոսով եւ 2 տոկոսով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դրամով արտահայտված միջոցներով:

Համաշխարհային բանկի «Հայաստան. տնտեսության ամենամյա տեսություն - սեպտեմբեր 2024» ամփոփագրից

ԸՆԹԱՑԻԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Մերի Անտոնյանս, 1 ամիս առաջ Եղեգնաձորի տարածքում կորցրել եմ իմ ավարտական դիպլոմը:

Դիպլոմը «տեխնիկ ծրագրավորողի» որակավորմամբ է եւ տրվել է ինձ 2019 թվականին Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի կողմից:

Գտնողին խնդրում եմ գանգահարել +374 94 525 071 հեռախոսահամարով:

ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՑ ԿՈՄԻՏԱՍԻ ԸՈՒԿԱՆ ՉԻ ԳՈՐԾԻ

Կոմիտասի շուկայի փակման վերաբերյալ տեղեկատվական հրաբուխը կարծես թե հանգել էր, սակայն խառնարանում դեռ շարունակվում են եփվել փակման, գնման եւ սեփականաշնորհման գործընթացների մասին խոսակցությունները: Տասն օր առաջ շուկայի վաճառողներին մինչեւ դեկտեմբերի 31-ը ժամանակ են տվել:

«Ժողովուրդ» օրաթերթն այցելել է Կոմիտասի շուկա՝ հասկանալու, թե ինչ թարմացումներ կան, արդյոք վաճառականներ

րի գլխին կրկին դամոկլյան սրի պես կախված է փակման վտանգը:

Շուկայում լուռություն է վաճառականները սպասում են, որ մուտքից գոնե մեկ հաճախորդ ներս մտնի: Ներսում էլ վաճառողներն ավելի շատ են, քան գնորդները: Ասում են՝ փակվելուց հետո միակ ցավը սիրելի ու հավատարիմ հաճախորդներին չտեսնելն է լինելու:

Բոլորը սպասում են, որ գոնե դեկտեմբերի 31-ից հետո, երբ կրկին վերադառնան աշխատանքի, շուկայում աշխատելու ժամկետը կրկին կերկարեցնեն, սակայն ինչքան է այսպես մտալու՝ դժվարաւում են ասել:

Այնուամենայնիվ, վստահ են, որ այսքան ձգձգել են՝ դեկտեմբերից հետո նորից ժամանակ կտան աշխատելու:

ՀԱՍՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԿԱՍՊԵՐՍԿԻ» ԾԱԾԿԱԳՐՈՂ ԸՈՐԹԻՉՆԵՐԻ ԳՐՈՂՆԵՐ

«Կասպերսկի» ընկերության լուծումները 2024-ի առաջին 8 ամիսներին հետ են մղել Հայաստանում գտնվող կորպորա-

տիվ եւ տնային օգտատերերի համակարգիչների վրա ծածկագրող շորթիչների 26 149 գրոհ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հետ է մղվել 6 397 գրոհ: Այդ գրոհների քանակն ավելի քան քառապատկվել է:

Ընկերության փորձագետները զգուշացնում են, որ ծածկագրող ծրագրերի զոհ դարձած օգտատերերին խորհուրդ է տվում ոչ մի դեպքում փրկագին չվճարել ֆայլերի ապաճածկագրման համար, քանի որ դա չի երաշխավորում ֆայլերին հասանելիության վերադարձը, բայց ցանցահեղձների հաստատ կմոլի վնասաբեր ծրագրի հետագա տարածման: Անհրաժեշտ է նաև միջադեպի մասին տեղեկացնել իրավապահ մարմիններին, փորձել տեղեկատվություն գտնել այն մասին, թե հենց որ ծրագիրն է գրոհել սարքը կամ դիմել փորձագետներին. հնարավոր է, որ ֆայլերն ապաճածկագրելու հնարավորություն ընձեռող ծրագիրն արդեն գոյություն ունի, եւ անվտանգության մասնագետները կկարողանան օգնել փաստաթղթերին հասանելիությունը վերականգնելու գործում: «Ծածկագրող տրոյանցիների» գրոհները հաճախ ուղեկցվում են ստիլերով վարակմամբ, որը համակարգից գողանում է տվյալները, ներառյալ՝ գաղտնաբառերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար գանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԻՇՎՏԱԿԻ ՕՐ

Ռ. ՄԱՐԱԿՅԱՆՅԻ ՄԵԾ ԵՐԲՐՈՒՄԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հայ ազգը հանրահայ է ոչ միայն իր հնագույն դասնությունը, համեղ խոսքը, դասնամակարային արժեքներով, այլև նկարագրային մի բարձր գործիչներով:

Ռոբերտ Սահակյանը մշակութային այն գործիչն է, որը հայ փոքրիկների կյանքն առավել գունավոր է դարձրել իր բարոյախորատական մուլտֆիլմերով:

Հանրահայտ «Մեր բակը 2» ֆիլմում Սահակյանը նույնպես իր ավանդն է ունեցել:

Ռոբերտ Սահակյանը ամուսնացած էր Լյուդմիլա Սահակյանի հետ. նրանք ունեցել են 3 երեխա՝ Դավիթը, Հայկը եւ Նանան:

Սահակյանը վայելում էր ժողովրդի մեծ սերն ու հարգանքը, սակայն, ցավոք, այդ ամենը կարճ տեւեց: Ռոբերտ Սահակյանը մահացավ 2009 թվականի սեպտեմբերի 24-ին՝ երկարատեւ հիվանդությունից եւ սրտի բարդ վիրահատությունից հետո:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է Ռոբերտ Սահակյանի «Սա էլ այսպես» մուլտֆիլմի ստեղծման հետ կապված հետաքրքրաշարժ մի պատմություն:

Այս պատմությունը սկսվում է այն ժամանակ, երբ Սահակյանը որոշում է ստեղծել մուլտֆիլմ, որը պետք է արտացոլի սովետական հասարակության որոշակի յուրահատկություններ: Մուլտֆիլմը սատիրայի միջոցով քննադատում է սոցիալական նորմերն ու բյուրոկրատիան: Սակայն այդ տարիներին, երբ ստեղծագործական ազատությունը սահմանափակ էր, նման սուր թեմաները հաճախ բախվում էին գրաքննության: Սահակյանը, իմանալով այդ մասին, որոշում է օգտագործել ավեգորիա եւ սիմվոլիկա, որպեսզի կարո-



ղանա ներկայացնել իր գաղափարները՝ անցնելով գրաքննության մաղը: Երբ մուլտֆիլմն արդեն պատրաստ էր, այն ներկայացվեց գրաքննիչներին, ովքեր այնտեղ է որոշեին՝ արդյոք այն կիրառարկվի, թե ոչ: Սահակյանը եւ իր թիմը մտահոգված էին, որ մուլտֆիլմը կարող է արգելվել սուր հումորի պատճառով: Սակայն, ի գարմանս բոլորի, գրաքննիչները, կարծես չհասկանալով ծածկագիր իմաստը, միայն ծիծաղում են մուլտֆիլմի վրա եւ թողնում, որ այն եթեր դուրս գա:

Մուլտֆիլմը մեծ տարածում է ձեռք բերում, ինչպես նաեւ ժողովրդի սերը, իսկ Ռոբերտ Սահակյանը դառնում է ավելի հայտնի՝ իր յուրահատուկ ոճի, սրամիտ

աստիքային եւ սիմվոլիկայի օգտագործման շնորհիվ: Իր այս աշխատանքի արդյունքում նա ստեղծեց մի արվեստ, որն ուներ ավելի խոր իմաստներ, քան կարող էր թվալ առաջին հայացքից, եւ որի միջոցով կարողացավ անցնել գրաքննության խիստ սահմանները:

Այս պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես Սահակյանը հաջողությամբ հաղթահարեց ստեղծագործական սահմանափակումներն ու դարձավ խորհրդային շրջանի առաջատար մուլտիպլիկացիոն ռեժիսորներից մեկը, որի աշխատանքները մնում են արդիական մինչեւ այսօր:

ԱՆՆԱ ՄՈՒՊԻՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԶԻԳԱՆԻ ՈՐԳԻՆ՝ ԿԱՐԻԵՐԱՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ֆրանսիայի ազգային հավաքականի եւ Մարդրի «Ռեալի» նախկին լեգենդար կիսապաշտպան Զինեդին Զիդանի ավագ որդին՝ Էնցոն, հայտարարել է 29 տարեկանում պրոֆեսիոնալ խաղացողի կարիերան ավարտելու մասին: Այս մասին հայտնում է AS-ը:

Աղբյուրի փոխանցմամբ՝ Էնցո Զիդանը նախատեսում է կենտրոնական ընտանիքի եւ ներդրումային գործունեության վրա: Էնցոն «Ռեալի» ակադեմիայի սան է: «Արքայական» ակումբի երկրորդ թիմում նա անցկացրել է ավելի քան 100 հանդիպում:

Նա հանդես է եկել նաեւ այնպիսի ակումբներում, ինչպիսիք են «Ալավեսը», «Լոգանը», «Ալեսը», «Ալմերիան» եւ այլն: Էնցոյի վերջին ակումբը եղել է իսպանական «Ֆուենլաբրադան», որի կազմում նա խաղացել է 2022-2023 թվականներին:

ԲՐՈՆՋԵ ՄԵԳԱԼԱԿԻՐՆԵՐ

Հայաստանի շախմատի կանանց հավաքականի անդամներ Էլինա Դանիելյանը եւ Աննա Սարգսյանը Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում ավարտված շախմատի ամառային հային 45-րդ Օլիմպիադայում բրոնզե մեդալներ են նվաճել առանձին խաղատախտակներին:

Կանանց մրցաշարում Հայաստանի հավաքականը թիմային պայքարում կիսել է 3-6-րդ հորիզոնականները՝ լրացուցիչ ցուցանիշներով զբաղեցնելով 5-րդ հորիզոնականը:

Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականն Օլիմպիադայում կիսել է 2-6-րդ հորիզոնականները՝ լրացուցիչ ցուցանիշներով զբաղեցնելով 6-րդ հորիզոնականը:

Հայաստանի տղամարդկանց եւ կանանց հավաքականներն ընդհանուր վաստակած միավորներով երրորդն են Հնդկաստանից եւ ԱՄՆ-ից հետո:

«ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ՆՈՐ ԳԱՐՊԱՍՏԱԳԱՀ ԿՈՒՆԵՆԱ

Կատալոնական «Բարսելոնան» Մարկ-Անդրե տեր Շտեգենի վնասվածքից հետո միջոցներ կծեռնարկի դարպասապահի դիրքը ամրապնդելու ուղղությամբ, հայտնում է Marca-ն:

Աղբյուրի տվյալներով, սեպտեմբերի 23-ին կայացել է ակումբի գլխավոր մարզիչ Հանսի Ֆլիկի եւ սպորտային տնօրեն Դեկլոի արտակարգ հանդիպումը՝ դարպասապահի խնդիրը քննարկելու համար:

Երկուսն էլ կողմ են եղել նոր դարպասապահ ձեռք բերելուն, քանի որ կարծում են, որ թիմը չի կարող հաղթահարել ընթացիկ մրցաշրջանը ներկայիս դարպասապահների կազմով:

Նշվում է, որ ակումբը դեռ չի որոշել Տեր Շտեգենի փոխարինողի թեկնածությունը, սակայն քննարկվում է ազատ գործակալի կարգավիճակ ունեցող փորձառու ֆուտբոլիստի հետ պայմանագիր կնքելու հարցը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՈՒՇԱԳԻՐ՝ 3 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի եւ «Լա Սկալա» թատրոնի Կատարողական արվեստների եւ արհեստների ակադեմիայի միջեւ երեկ ստորագրվել է համագործակցության հուշագիր:

Հուշագիրը ստորագրել են Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Կարեն Դուրգարյանը եւ «Լա Սկալա» թատրոնի Կատարողական արվեստների եւ արհեստների ակադեմիայի գործադիր տնօրեն Լուիզա Վինչին:

Փաստաթղթի ստորագրմանը ներկա է եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը: Հուշագրի ստորագրման նպատակն է նպաստել երկու հաստատություններում կատարողական արվեստի զարգացմանը, ինչպես նաեւ սահմանել թատրոնների միջեւ համագործակցության ուղղությունները, այդ թվում՝ փորձի փոխանակման, կրթական, տեխնիկական վերապատրաստումների ոլորտներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը մեծապես արժեւորել է այս փոխգործակցությունը՝ նշելով, որ ՀՀ կառավարության եւ ԿԳՄՍ նախարարության առաջնահերթություններից է հայ մշա-

կույթի հանրահռչակումը, եւ այս հուշագրի ստորագրումը գերազանց հնարավորություն է այդ նպատակն իրագործելու համար:

Մատերո Կարեն Դուրգարյանի խոսքով՝ սա բացառիկ եւ աննախադեպ մասշտաբի ծրագիր է, որը միտված է թատրոնի աշխատակիցների մասնագիտական կատարելագործմանը ֆոտո եւ վիդեո նկարահանման, բեմական ռեժիսուրայի, նոր մեդիայի, բեմական մենեջմենթի, բեմական լուսավորման եւ ձայնային ռեժիսուրայի, բեմական գրիմի եւ բեմական կոստյումների մշակման ոլորտներում:

Լուիզա Վինչին կարեւորել է այս համագործակցությունը եւ նշել, որ բոլոր ջանքերը կներդրվեն ծրագրի իրականացման համար:

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ ԵՆ «ՔԱՐԱԿԱՐՄՈՒՆՋ»-Ը ԵՎ ՉՈՐԱԹԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության եւ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների ու պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներն այցելել են Տավուշի մարզի Նավուր գյուղ՝ «Քարակարմունջ» կամրջի (հայտնի է նաեւ «Հախումի կամուրջ» անվամբ) վի-

ճակի ուսումնասիրման եւ մշտադիտարկման նպատակով:

19-20-րդ դարերին թվագրվող հուշարձանի ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքներն իրականացվելու են պետական բյուջեի միջոցներով: Տեղում քննարկվել են առաջին փուլով նախատեսված հուշարձանի գիտնախազմային փաստաթղթերի կազմման եւ երկրորդ փուլով՝ վերականգնման աշխատանքները:

Չորաթան գյուղի Սբ Հռիփսիմե եկեղեցու ամրակայման, նորոգման եւ վերականգնման աշխատանքներն իրականացվում են բարերար Վարդան Քալանթարյանի հատկացրած միջոցներով, այս նպատակով ԿԳՄՍ նախարարությունը 2022 թ. մայիսի 20-ին հուշագիր էր կնքել բարերարի հետ: Եկեղեցու վերականգնման գիտնախազմային փաստաթղթերը սահմանված կարգով ներկայացվել են լիազոր մարմնի համաձայնեցմանը, որից հետո տրվել է նաեւ վերականգնման թույլտվություն: Իրականացված ու ընթացքում գտնվող վերականգնման աշխատանքները տեղում դիտարկվել են մասնագետների կողմից: Համադրելով նախագծով առաջարկվող լուծումների հետ՝ քննարկվել են շտկման ենթակա եւ իրականացվելիք աշխատանքների մանրամասները:

Չորաթանի Սբ Հռիփսիմե եկեղեցին կառուցվել է 1683 թ., սակայն բարերարի ֆինանսավորմամբ իրականացված հնագիտական ուսումնասիրությունները բացահայտել են նաեւ 11-13-րդ դդ. թվագրվող եկեղեցու հիմքեր:

● Հոկտեմբերի 26-ին՝ ժամը 19:30-ին, Երզնի պետական թատրոնում կլինի բացառիկ պրեմիերա՝ «Կոմիտաս» երաժշտական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-5.000 դրամ:



**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ**

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչո՞ւն է հազվադեպ աշխատանքային սածը: Ուզում եմ ծանոթանալ հազվադեպ կարգին:**

*Ամայա Մխոյան (46 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ա. Մխոյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատանքային ստաժում հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի ընդունելուց մինչև ազատելու օրն ընկած ժամանակահատվածները, այլ գործունեության ժամանակահատվածները, ինչպես նաև զինվորական ծառայության ժամանակահատվածները: Ստաժում հաշվարկվում են յուրաքանչյուր ժամանակահատվածի տարին, ամիսը, օրը, այնուհետև գումարվում, ընդ որում՝ յուրաքանչյուր 30 օրը հաշվառվում է որպես մեկ լրիվ ամիս, իսկ յուրաքանչյուր 12 ամիսը՝ մեկ լրիվ տարի: Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչև 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար՝ անհրաժեշտ առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ աշխատանքային ստաժում հաշվառվում է նաև ծնողներից մեկի՝ հաշմանդամ երեխային մինչև նրա 18 տարին լրանալը, կամ խնամակալ ճանաչված անձի առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի:

**ԿՎՐԳ**

**ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ եթե ՀԿ-ն ֆիզիկական անձին կրթաթոշակ է սպիս, արդյո՞ք եկամտային հարկի դարձվորություն առաջանում է, թե ոչ: Մանվել Սիրադեղյան (52 տարեկան)**



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի համաձայն՝ նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված կրթաթոշակները, ինչպես նաև այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակվում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ և 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

**ՀՀ պետական եկամուտների կոմիտե**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Այսինքն՝ ՀԿ-ի կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

**ԼՈՒՐ ԿԱԴՐ**

*Լուսանկարը՝ համացանցից*



Այն, որ Կենտրոնում աղբամանները բավարար կերպով չեն մաքրվում եւ թարմացվում, մեղծ ասած, նորություն չէ: Սակայն համաձայնե՞ք՝ աղբը պատահած վայրում նետելը, հատկապես քաղաքի պատմական շենքերի շուրջ «շարելը» եւս պատվաբեր չէ:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել



«Հայկոստ» ՊՓԲԸ  
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդախտաբար ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
Ազգանուն՝ \_\_\_\_\_  
Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

**ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**



☀	Շիրակ	+3 + 8 +18 + 23	☀	Արարատ	+13 + 15 +25 + 27
☀	Կոտայքի լեռներ	+4 + 7 +18 + 21	☀	Արմավիր	+12 + 14 +25 + 27
☀	Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +22 + 24	☀	Վայոց ձորի լեռներ	+6 + 8 +17 + 20
☀	Գեղարքունիք	+4 + 8 +17 + 20	☀	Վայոց ձորի նախալեռներ	+13 + 15 +25 + 27
☀	Լոռի	+6 + 10 +18 + 21	☀	Սյունիքի հովիտներ	+16 + 18 +23 + 26
☀	Տավուշ	+8 + 13 +20 + 24	☀	Սյունիքի նախալեռներ	+8 + 11 +19 + 21
☀	Արագածոտնի լեռներ	+4 + 7 +17 + 20	☀	ԼՂՀ	+8 + 10 +17 + 19
☀	Արագածոտնի նախալեռներ	+10 + 14 +21 + 25	☀	Երեւան	+18 + 20 +23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության 24.9.2024  
Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնստվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: